

«Հաստատում եմ»

ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի պետ՝

բ/ծ գնդապետ

Վ. ԾԱՏՈՒԲՅԱՆ

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019թ.

**ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի կուրսասնների  
Ամփոփիչ համալիր ատեստավորման  
Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր**

**ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**

***«Բժշկական ծառայության կազմակերպում և մարտավարություն»***

1. Հասկացություն բուժտարհանման միջոցառումների մասին, նրա էությունը, սկզբունքները և զարգացումը:
2. Բուժօգնության տեսակ և ծավալ հասկացությունների բնութագիրը և սահմանումը: Բուժօգնության ծավալի փոփոխության վրա ազդող մարտական և բժշկական իրավիճակների գործոնները: ՀՀ ԶՈՒ ԲԾ կողմից ընդունված բուժօգնության տեսակները և տիպային միջոցառումների ցանկը (ստանդարտներ):
3. Բուժտարհանման փուլ: Սահմանումը, ծավալման վայրին ներկայացվող պահանջները, ծավալման սկզբունքային սխեման: ՀՀ ԶՈՒ-ում ընդունված բուժտարհանման փուլերի բնութագիրը:
4. Բժշկական տեսակավորում, խնդիրները, նպատակը, նշանակությունը և կազմակերպումը: Բժշկական տեսակավորման ձևերը, խմբերը և տեսակավորման արդյունքում ձևավորվող վիրավորների ու հիվանդների հոսքերը: Տարհանման համար նախատեսված տրանսպորտային միջոցները և նրանց հնարավորությունները:
5. Մոտոհրաձգային գնդի բժշկական ծառայության կազմակերպչահաստիքային կառուցվածքը: Մոտոհրաձգային գնդի բուժծառայության խնդիրները:
6. Մոտոհրաձգային գնդի բուժծառայության պաշտոնատար անձանց պարտականությունները:
7. Գումարտակի և գնդի բուժկետերի կառուցվածքը, խնդիրները, հագեցվածությունը: Գնդի բուժկետի ծավալման սխեման, ծավալման վայրին ներկայացվող պահանջները:
8. Գնդի բուժկետի ֆունկցիոնալ ստորաբաժանումների նշանակությունը, կահավորումը և աշխատանքի կազմակերպումը: Գնդի բուժկետի հաշվառման և հաշվետվության փաստաթղթերը, նրանց վարման կարգը:
9. Զորամասերի (գորամիավորումների) բուժծառայության կառավարման հիմունքները պատերազմի ժամանակ: Բուժծառայության կառավարում: Կառավարման համակարգի կառուցվածքը: Կառավարմանը ներկայացվող պահանջները:
10. Մարտական գործողությունների նախապատրաստական փուլում բուժծառայության պետի աշխատանքի բովանդակությունը: Մարտական գործողությունների բուժապահովման

պլան: Սանիտարական կորուստների և բուժառայության ուժերի ու միջոցների հաշվարկը:

11. Բժշկական ծառայության կառավարման բովանդակությունը մարտական գործողությունների ընթացքում: Բժշկական ծառայության ուժերով և միջոցներով զորաշարժեր:
12. Բժշկական ծառայության գործունեության պայմանները ժամանակակից պաշտպանական մարտում: Գնդի հավանական սանիտարական կորուստների մեծությունը և կառուցվածքը: Բժշկական ծառայության կողմից անցկացվող միջոցառումները պաշտպանական մարտի նախապատրաստական փուլում:
13. Բժշկական ապահովման կազմակերպումը բուն պաշտպանական մարտում:
14. Մոտոհրաձգային (տանկային) գնդի բուժապահովման կազմակերպումը շրջափակումում և շրջափակումից դուրս գալու ընթացքում:
15. Բժշկական ծառայության գործունեության պայմանները ժամանակակից հարձակողական մարտում: Գնդի հավանական սանիտարական կորուստների մեծությունը և կառուցվածքը: Բժշկական ծառայության կողմից անցկացվող միջոցառումները հարձակողական մարտի նախապատրաստական փուլում:
16. Բժշկական ապահովման կազմակերպումը բուն հարձակողական մարտի ընթացքում:
17. Բժշկական ծառայության գործունեության պայմանները ռազմերթի ժամանակ: Երթուղիների բժշկական հետախուզության կազմակերպումը և նպատակը: Բուժտարհանման միջոցառումների կազմակերպումը ռազմերթի ժամանակ:
18. Մոտոհրաձգային (տանկային) գնդի բուժապահովման կազմակերպումը հանդիպակաց մարտի ու ջրային արգելքների հաղթահարման ժամանակ:
19. Բուժապահովման առանձնահատկությունները և կազմակերպումը տեղային ընդհարումներում ու պատերազմներում:
20. Մարտական գործողությունների բուժապահովման առանձնահատկությունները և կազմակերպման հիմունքները լեռներում և բնակավայրերում:
21. Մարտական գործողությունների բուժապահովման առանձնահատկությունները և կազմակերպման հիմունքները լեռներում, ձմռանը և գիշերը:
22. Հավանական մարտական գործողությունների տարածքի բժշկաաշխարհագրական բնութագիրը և դրա ազդեցությունը զորքերի անձնակազմի առողջության ու մարտական գործողությունների բուժապահովման կազմակերպման վրա:

### **Անհրաժեշտ ուսումնամեթոդական գրականություն**

- Лекции по “Организация и тактика медицинской службы”, Ст. Петербург, 2004г.
- “Наставление по медицинскому обеспечению войск”,
- Учебник “Организация и тактика медицинской службы”, А.М. Шелепов, Л.М. Костенко, О.В. Бабенко Ст. Петербург, 2005г.
- “Военно-медицинская география” В.П. Бяков, Е.И. Веселов, А.И. Гуров, Н.К. Соколов, А.В. Яковлев, Ленинград 1987.
- ԵՊԲՀ ԲԾԿՄ ամբիոնի դասախոսություններ:

**«Անձնակազմի բժշկական ապահովման կազմակերպում»**

1. ՀՀ ՋՈՒԻ բժշկական ծառայության կազմակերպումը և խնդիրները խաղաղ ժամանակ: Ջորամասի բժշկական ծառայության պաշտոնատար անձանց պարտականությունները (գորամասի բուժծառայության պետ, գորամասի բուժկետի պետ, գորամասի բուժկետի դեղատան պետ):
2. ՀՀ ՋՈՒԻ բուժծառայության կառավարման հիմունքները և աշխատանքների պլանավորումը խաղաղ պայմաններում: Կառավարման համակարգի բաղադրիչները, ներկայացվող պահանջները:
3. Ջորամասի բժշկական ծառայության աշխատանքի պլանավորում: Աշխատանքային պլանների տեսակները (տարեկան, կիսամյակային, ամսեկան, մասնավոր):
4. Բուժկանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը և բովանդակությունը ՀՀ ՋՈՒԻ-ում: Զինծառայողների դիսպանսերիզացիա (դիսպանսերացում): Անցկացման նպատակը և բովանդակությունը:
5. Զինծառայողների առողջական վիճակի բժշկական հսկողության կազմակերպումը: Երիտասարդ համալրման զինծառայողների առաջնային բուժզննման կազմակերպումը:
6. Շարքային կազմի պլանային բուժզննման և սպայական ու ենթասպայական անձնակազմի, պայմանագրային զինծառայողների և քաղաքացիական հատուկ ծառայողների ամենամյա խորացված բժշկական քննության և հսկիչ-բժշկական հետազոտության կազմակերպումը:
7. Զինծառայողների բժշկական գնումների կազմակերպումը գորամասում:
8. Մարտական պատրաստության ընթացքում և կենցաղում անձնակազմի ամենօրյա բժշկական հսկողություն: Զինծառայողների դիսպանսեր-դինամիկ հսկողություն:
9. Բուժախտորոշիչ աշխատանքի կազմակերպումը գորամասում: Բուժախտորոշիչ աշխատանքի խնդիրները և բովանդակությունը: Անհետաձգելի բուժօգնության կազմակերպումը գորամասում:
10. Հիվանդների ամբուլատոր ընդունելության և բուժման կազմակերպումը գորամասի բուժկետում:
11. Պայմանագրային զինծառայողների, նրանց ընտանիքի անդամների և զինծառայողներին հավասարեցված անձանվ բուժօգնության ցուցաբերման կազմակերպումը տնային պայմաններում:
12. Հիվանդների ստացիոնար բուժման կազմակերպումը գնդի բուժկետում:
13. Մարտական պատրաստականության պարապմունքների, ներքին ծառայության, պահակային ծառայության վերակարգերի, անձնակազմի տնտեսական գործունեության, տեղափոխումների սպորտային միջոցառումների բժշկական ապահովման կազմակերպումը:
14. Բուժկանխարգելիչ միջոցառումների առանձնահատկությունները ՀՀ ՋՈՒԻ գորատեսակներում՝ օդադեսանտային ստորաբաժանումներում, օդուժի թռիչքային անձնակազմի շրջանում, հակաօդային պաշտպանության ստորաբաժանումներում:
15. Բուժծառայության անձնակազմի մարտական ու մասնագիտական և ՀՀ ՋՈՒԻ անձնակազմի ռազմաբժշկական պատրաստության կազմակերպման հիմունքները, դասընթացների պլանավորման ու անցկացման մեթոդաբանությունը և թեմատիկան:

16. Բժշկական ծառայության գորահավաքային պատրաստություն: Խաղաղ պայմանների գորամասերի ու միավորումների բնութագիրը: Ժամանակակից գորահավաքի անցկացման պայմանները:
17. Մարտական պատրաստության աստիճանները և նրանց բնութագիրը: Տարբեր աստիճանի մարտական պատրաստության բերման դեպքում բժշկական գորամասերում և հաստատություններում իրականացվող միջոցառումները:
18. Բուժծառայության գորամասերի ու հաստատությունների գորահավաքային ծավալման և գորահամալրման հիմունքները: Ջորահավաքային աշխատանքի հիմունքները գորամասում:
19. Ջորամասի բուժկետ: Կառուցվածքը և խնդիրները: Գնդի բուժկետի տիպային շինության կառուցվածքը, ֆունկցիոնալ ստորաբաժանումների տեղաբաշխումը և նյութական հագեցվածությունը, աշխատանքի կազմակերպումը խաղաղ պայմաններում:
20. Ջորամասի բուժծառայության և բուժկետի պետի պաշտոնների հանձնումն ու ընդունումը: Ընդունման և հանձնման հանձնաժողով, աշխատանքի կարգը, ժամանակացույցը: Ընդունման-հանձնման ակտ:
21. Առանձին բժշկական ջոկատի աշխատանքի կազմակերպումը խաղաղ պայմաններում:
22. Զինվորական պոլիկլինիկայի աշխատանքի կազմակերպումը խաղաղ պայմաններում:
23. Զինվորական հոսպիտալի աշխատանքի կազմակերպումը խաղաղ պայմաններում:

#### **Անհրաժեշտ ուսումնամեթոդական գրականություն**

- Руководство по медицинскому обеспечению советской армии и военно-морского флота. Москва 1991г.
- Руководство по медицинскому обеспечению армии и военно-морского флота. Москва 2006г.
- Лекции по управлению повседневной деятельностью медицинской службы, Ст. Петербург, 2004г.
- Խաղաղ պայմաններում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բժշկական ապահովման ձեռնարկ,
- ԵՊԲՀ ԲԾԿՄ ամբիոնի դասախոսություններ:

ԵՊԲՀ ՌԲՖ ԲԾԿՄ ամբիոնի պետ՝  
 ք/ծ փոխգնդապետ Գ.Ռ. Վարդանյան

## ՀԱՐՑԱՇԱԲ

### Ռազմադաշտային թերապիա

1. Ռազմադաշտային թերապիայի առարկան, խնդիրները և բովանդակությունը
2. Ռազմադաշտային թերապիայի զարգացման պատմությունը
3. Թերապևտիկ ուղղվածության ժամանակակից մարտական սանհիտարական կորուստների կառուցվածքը
4. Ցուցաբերվող թերապևտիկ օգնության կազմակերպման դասական սկզբունքները գործող բանակում
5. Ցուցաբերվող թերապևտիկ օգնության կազմակերպման սկզբունքներն ու առանձնահատկությունները տեղային պատերազմների ժամանակ
6. Մասնագիտացված թերապևտիկ օգնության կազմակերպումը գործող բանակում
7. Իոնիզացնող ճառագայթների հիմնական տեսակները, նրանց ֆիզիկական և կենսաբանական ազդեցությունը
8. Ռադիացիոն ախտահարումների դասակարգումը
9. Արտաքին համեմատաբար հավասարաչափ ճառագայթումից առաջացած սուր ճառագայթային հիվանդության զարգացման մեխանիզմը
10. Արտաքին համեմատաբար հավասարաչափ ճառագայթումից առաջացած սուր ճառագայթային հիվանդության կլինիկական ախտահարման առաջին շրջանում
11. Արտաքին համեմատաբար հավասարաչափ ճառագայթումից առաջացած սուր ճառագայթային հիվանդության կլինիկական ախտահարման երկրորդ շրջանում
12. Արտաքին համեմատաբար հավասարաչափ ճառագայթումից առաջացած սուր ճառագայթային հիվանդության կլինիկական ախտահարման երրորդ շրջանում
13. Սուր ճառագայթային հիվանդության ժամանակ առավել հաճախ հանդիպող համախտանիշները, նրանց զարգացման մեխանիզմները
14. Սուր ճառագայթային հիվանդության առանձնահատկությունները կախված ճառագայթման երկրաչափական ուղղությունից:
15. Սուր ճառագայթային հիվանդության առանձնահատկությունները նեյտրոնային ճառագայթումից
16. Սուր ճառագայթային հիվանդություն ռադիոակտիվ ամպի հետքի վրա
17. Սուր ճառագայթային հիվանդության առանձնահատկությունները ներքին ճառագայթումից
18. Համատեղված և համակցված ռադիացիոն ախտահարումներ
19. Սուր տեղային ռադիացիոն ախտահարումներ
20. Սուր ճառագայթային հիվանդության ախտորոշումը և փուլային բուժման սկզբունքները
21. Սուր ճառագայթային հիվանդության բուժումը առաջին շրջանում
22. Սուր ճառագայթային հիվանդության բուժումը երկրորդ շրջանում
23. Սուր ճառագայթային հիվանդության բուժումը երրորդ շրջանում
24. Սուր ճառագայթային հիվանդության բարդությունները և հետևանքները
25. Սուր ճառագայթային հիվանդության կանխարգելումը
26. Ռադիոպրոտեկտորներ
27. Քրոնիկական ճառագայթային հիվանդության դասակարգումը, զարգացման մեխանիզմը
28. Քրոնիկական ճառագայթային հիվանդության կլինիկական
29. Քրոնիկական ճառագայթային հիվանդության բուժումը
30. Ներքին օրգանների հիվանդությունների դասակարգումը մարտական վնասվածքների ժամանակ
31. Վիրավորների ներքին օրգանների հիվանդությունները
32. Թոքաբորբերի զարգացման մեխանիզմները և առանձնահատկությունները բուժումնու կանխարգելումը մարտական վնասվածքների ժամանակ
33. Վիրավորների ներքին օրգանների հիվանդությունների բուժման և կանխարգելման կազմակերպումը
34. Պայթյունային ալիքի ազդեցության մեխանիզմը կենդանի օրգանիզմի վրա
35. Ներքին օրգանների հիվանդությունները պայթյունային ալիքի ազդեցության տակ

36. Պայթյունային ալիքի ազդեցության տակ զարգացած ներքին օրգանների հիվանդությունների բուժման և կանխարգելման կազմակերպումը
37. Այրվածքային հիվանդության ախտածագումը
38. Այրվածքային հիվանդության կլինիկան, զարգացման շրջանները
39. Ներքին օրգանների հիվանդությունները թերմիկ ախտահարումների ժամանակ
40. Թոքաբորբերի զարգացման մեխանիզմները և առանձնահատկությունները բուժումնու կանխարգելումը թերմիկ ախտահարումների ժամանակ
41. Ներքին օրգանների հիվանդությունների բուժումնու կանխարգելումը թերմիկ ախտահարումների ժամանակ
42. Անհետածգելի թերապևտիկ օգնության կազմակերպումը գնդի բուժկետում
43. Տարբեր էթիոլոգիայի սուր թունավորումների ժամանակ անհետածգելի օգնության սկզբունքները
44. Ածխածնի օքսիդի ազդեցության մեխանիզմը, կլինիկական ձևերը, ախտորոշումը, անհետածգելի օգնություննու բուժումը գնդի բուժկետում
45. Ցիանիդներով ախտահարումների պաթոգենեզը, կլինիկան և ախտորոշումը, անտիդոտային թերապիայի մեթոդները, հաշվեցուցակային անտիդոտներ, բուժօգնությունը գնդի բուժկետում
46. Ֆոսֆոր օրգանական թունանյութեր, ազդեցության մեխանիզմը, պաթոգենեզը, կլինիկան և բուժումը
47. Մաշկաթարախային թունանյութեր, ազդեցության մեխանիզմը, պաթոգենեզը, կլինիկան և բուժումը
48. Հրթիռային վառելիքի կազմի մեջ մտնող այրվողներ և օքսիդացնողներ, սուր ախտահարումների կլինիկան և բուժումը
49. Ռազմական պոլիկլինիկայի աշխատանքի կազմակերպումը
50. Գերբարձր հաճախականության ալիքների ազդեցության մեխանիզմը, կլինիկայի արտահայտման համախտանիշները
51. Զինծառայողների շնչառական օրգանների հիվանդություննուների առանձնահատկությունները
52. Զինծառայողների սրտանոթային համակարգի հիվանդություննուների առանձնահատկությունները
53. Զինծառայողների ոսկրամկանային և շարակցական հյուսվածքի հիվանդություննուների առանձնահատկությունները
54. Զինծառայողների աղետամոքսային հիվանդություննուների առանձնահատկությունները

### **Անհրաժեշտ ուսումնամեթոդական գրականություն**

1. <<Ռազմադաշտային թերապիա>> ուսումնական ձեռնարկ, Ե.Գեմբիցկի, Ֆ. Կոմարով, Մոսկվա 1981թ.
2. <<Ներքին հիվանդություններ՝ ռազմադաշտային թերապիա>> ուսումնական ձեռնարկ, Ա. Ռակով, Ա. Սոսյուկին, Սանկտ-Պետերբուրգ 2003թ.
3. <<Ռազմադաշտային թերապիա>> ուսումնական ձեռնարկ, Վ. Կլյուժեվ, Մոսկվա 2007թ.
4. ՌԴԹ ամբիոնի դասախոսություններ
5. <<Զինծառայողների ներքին օրգանների հիվանդությունների ախտածագման, կլինիկայի և բուժման առանձնահատկությունները>>, ուսումնական ձեռնարկ. ԵՊԲՀ ԵՐԵՎԱՆ -2008; Գալստյան Ս.Գ.; Ծատուրյան Վ.Վ.; Նարիմանյան Մ.Զ.; Մարգարյան Մ.Վ.
6. <<Ճառագայթային ախտահարումներ>> ուսումնական ձեռնարկ. ԵՊԲՀ ԵՐԵՎԱՆ -2007; Գալստյան Ս.Գ.; Արզումանյան Ն.Ռ.

7. <<Գործող բանակում թերապևտիկ օգնության ցուցաբերումը>> մեթոդական ցուցումներ, ԵՊԲՀ ԵՐԵՎԱՆ -2007; Մխիթարյան Դ.Ս.; Դանիելյան Ա.Գ.

8. <<Գերբարձր հաճախականության էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությանը ենթարկվող անձանց ծառայողական գործունեության բժշկական հսկողության մասին>> մեթոդական ցուցումներ, ԵՊԲՀ ԵՐԵՎԱՆ -2006; Մխիթարյան Դ.Ս.; Գալստյան Ս.Գ.; Սահակյան Զ.Մ.

ԵՊԲՀ ՌԲՖ ՌԴԹ ամբիոնի պետ՝

բ/ծ գնդապետ

Վ.Վ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

## ՀԱՐՑԱՇԱՐ

### Ռազմադաշտային վիրաբուժություն

1. ՌԴՎ առարկան, բովանդակությունը և խնդիրները:
2. Վիրավորների որակավորված և մասնագիտացված բուժօգնության ծավալը և կազմակերպումը:
3. Հրազենային վնասվածքներ, վերքային բալխատիկա:
4. Հրազենային վնասվածքների դասակարգումը:
5. Հրազենային վերքերի վարակային բարդություններ: Դասակարգումը, էթիոլոգիան և պայթոզները:
6. Փայտացում: Դասակարգումը և կլինիկան: Կանխարգելումը և բուժումը տարհանման փուլերում:
7. Հրազենային վերքերի անաէրոբ վարակ: Ախտորոշումը, դասակարգումը:
8. Հրազենային վերքերի անաէրոբ վարակ: Կլինիկան և բուժումը:
9. Հրազենային վնասվածքների բուժման առանձնահատկությունները:
10. Հրազենային վերքերի առաջնային վիրաբուժական մշակում:
11. Երկրորդային վիրաբուժական մշակում, ցուցումները և եղանակը:
12. Վնասվածքային շոկ: Դասակարգումը: Վնասվածքային շոկի ախտորոշումը, կլինիկան և բուժումը բժշկական տարհանման փուլերում:
13. Արյունահոսություն, հեմոռագիկ շոկ: Ախտորոշումը, կլինիկան և բուժումը բժշկական տարհանման փուլերում:
14. Երկարատև ճմլման համախտանիշ: Դասակարգումը, կլինիկան և բուժումը:
15. Գանգի և գանգուղեղի հրազենային վնասվածքներ: Դասակարգումը:
16. Ողնաշարի և ողնուղեղի հրազենային վնասվածքներ: Դասակարգումը:
17. Ողնաշարի և ողնուղեղի հրազենային վնասվածքների ախտորոշումը, կլինիկան և բուժումը:
18. Որովայնի հրազենային վիրավորումները: Դասակարգումը:
19. Որովայնի փակ վնասվածքներ: Դասակարգումը:
20. Վերջույթների հրազենային վնասվածքների ընդհանուր բնութագիրը և դասակարգումը:
21. Վերջույթների և հոդերի հրազենային վնասվածքներով վիրավորների բուժօգնության կազմակերպումը մարտի դաշտում և բուժտարհանման փուլերում:
22. Վնասվածքային հոդախախտեր: Դասակարգումը, ախտորոշումը և բուժումը:
23. Ծնկան հոդի վիրավորումներ և վնասվածքներ: Դասակարգումը, ախտորոշումը և բուժումը:



24. Հրագենային կոտրվածքներ :Դասակարգումը, ախտորոշումը և բուժումը:
25. Երկար խողովակաձև ոսկորների հրագենային կոտրվածքներ: Դասակարգումը, ախտորոշումը և կլինիկան:
26. Կոնքի բաց և փակ վնասվածքներ: Դասակարգումը:
27. Տրանսպորտային անշարժացում: Բեկակալների տեսակները: Դեամուրգիա:
28. Կրծքավանդակի հրագենային վիրավորումներ: Դասակարգումը:
29. Կրծքավանդակի փակ վնասվածքներ: Հեմոպնևմոթորաքս:
30. Կողերի հրագենային կոտրվածքներ: Կլինիկան և բուժումը:
31. Արհեստական շնչառություն /ըստ Գովարդի, Սիլվեստերի, Մարշալ Հոլլի, բերան-բերան, բերան-քիթ/ և սրտի անուղղակի մերսում:
32. Անզգայացման տեսակները: Դասակարգումը: Ընդհանուր անզգայացումը ռազմադաշտային վիրաբուժության մեջ:
33. Տեղային ցավազրկում: Տեսակները և կատարման տեխնիկան:
34. Հաղորդչական և ինֆիլտրատիվ ցավազրկում:
35. Ցրտահարում: Դասակարգումը: Կլինիկան և բուժումը տարհանման փուլերում:
36. Այրվածքային հիվանդություն, դասակարգումը: Այրվածքային հիվանդության կլինիկան և բուժումը:
37. Էլեկտրոայրվածքներ: Այրվածքների ախտորոշումը ըստ խորության և մակերեսի: Կլինիկան և բուժումը:
38. Ականապայթյունային վնասվածքները: Դասակարգումը:
39. Ականապայթյունային վնասվածքների կլինիկան և բուժումը տարհանման փուլերում:
40. Կոմբինացված վնասվածքների կլինիկան և բուժումը

### Անհրաժեշտ ուսումնամեթոդական գրականություն

1. <<Ռազմադաշտային վիրաբուժական ծառայության կազմակերպման հիմունքները գործող բանակում>>, Ա.Մ. Փարսադանյան, Մ.Գ. Մարգարյան, Մ.Գ. Գալստյան, Երևան 2005թ.
2. << ՌԴՎ>>, Ա.Ք. Զարացյան, Ա.Ռ. Գրիգորյան Երևան 2000թ.
3. ՌԴՎ ամբիոնի դասախոսություններ

ԵՊԲՀ ՌԲՖ ՌԴՎ ամբիոնի պետ՝

բ/ծ փոխգնդապետ

Ա.Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ